Գ.

Հայրապետական պարգեւք.

Կոնդակ *լանջախաչից յանուն Տ. Սարգիս քահանայի Մարտիրոսեան Նիսուիթայ գեղջ* (Թ. 948), *Տ. Ստեփաննոս քահանայի Պապայեան Լուգանսկ քաղաքի* (Թ. 950), *Տ. Էմմանուէլ վարդապետի Պալեան յԵրզնկայ* (Թ. 955), *Տ. Համբարձում քահանայի Վարդանեան ի Նոր Ջուղայ* (Թ. 1024). *Տ. Գարեգին քահանայի Արծրունւոյ ի Դաւրէժ* (Թ. 1032)։

— *Յանուն Սահակ վարդապետի, որով հրամայեցաւ նմա կրել զծաղկեայ փիլոն։* Թ. 1039.

— *Յանուն Տ. Մկրտչի քահանայի Տ. Յակոբեան ի Նոր Նախիջեւան, որով տուան նմա իրաւունք կրել զկամիլաւկայ։* Թ. 999.

ՔԱՂՈՒԱԾՔ ՅՈՐԱԴՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՈԴԻ

Ի 18-*ն մայիսի Սինոդն հրամայեաց պատուիրել Կոնսիստորիային Վրաստանի հաստատել այրւոյն Գրիգորի քահանայի Մատինեանց զոր ինչ հասանելոց է նմա ըստ օրինի եւ կարճել զայս գործ ի Սինոդիս։* Հ. 461.

Ի նմին թուի հրամայեաց, քանզի ըստ յայտարարութեան Յովէլ վարդապետի սկսեալ է ի Սինոդիս առանձին գործ զզեղծմանց Ստեփաննոս վարդապետի, ուստի կարճել զայս գործ։ Հ. 462.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց, զխնդիր հաւատարմատարաց Մաստարայ գեղջ թողուլ առանց հետեւանաց, զոր եւ ծանուցանել նոցա ի ձեռն վանական Կառավարութեան։ Հ. 463.

Ի նմին թուի Սինոդն լուեալ զբողոք պ. Պրոկուրորի Սինոդիս՝ փոխել զվճիռ սորին, որ ի 16-ն յունիսի 1906 ամի և պատուիրել Կոնսիստորիային Երևանայ կարգել զՄիքայէլ քահանայն Տ. Մկրտչեանց ժամանակաւոր վերահսկիչ վանուցն Կեչառու ցկարգումն վանահօր։ Հ. 464.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց, զինդիր Ծխ. հոգաբարձութեան Կարուց, որ վասն հատուցանելոյ զվարձ բնակարանի փոխանորդին և հոգեւոր Կառավարութեանս ի վիճակային արդեանց՝ թողուլ առանց հետևանաց։ Հ. 465.

Ի 28-ն մայիսի Սինոդն հրամայեաց պատուիրել կառավարչի կալուածոց Մ. Աթոռոյ, որ ի Տփխիս՝ Տ. Եփրեմ վարդապետի պահանջել յԵղնիկ քահանայէ Երզնկեանց յընթացս երկուց եօթնեկաց առաջի առնել զպարտիս իւր ի գումար 330 ռուբլեաց՝ ի հակառակ դէպս պահանջել զայնս ի ձեռն դատարանի։ Հ. 475,

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց կոել դաչն ընդերդուեալ հաւատարմատարի Գրիգորի Տէր Խաչատրեան ի տալ պաշտպանել ամենայն վիճական գործոց Սինոդիս և Կոնսիստորիային Երևանայ։ Հ. 476.

Ի 30-ն մայիսի Սինոդն հրամայեաց ծանուցանել հեռագրաւ Կոնսիստորիային Աստրախանի, եթէ ի կողմանէ Սինոդիս չէք արգել ածելոյ ի կատար զհրաման Նորին Սրբութեան՝ վասն հեռացուցանելոյ ի Շուրայէ զԳէորգ քահանայն Փարիմազեանց։ Հ. 477.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց պատուիրել վարչութեան ճեմարանի տալ Յակոբայ Գենջեան զոռճիկ ուսուցչութեան ցl-ն առաջիկայ սեպտեմ. իսկ զվերակացութեան ցl-ն Ապրիլի անցելոյ ըստ յայտարարութեան տեսչի ճեմարանի ,l7-ն ապրիլի։ Հ. 479.

Ի 1-ն յունիսի Սինոդն՝ զիջեալ ի խնդիր Միքայել վարպետի՝ թոյլ տալ նմա առաջի առնել զպարտիս իւր ցվերջ սեպտեմբերի 1908 ամի։ Հ. 493.

Ի 4-ն յունիսի Սինոդն հրամայեաց թոյլ տալ Կոնսիստորիային Երևանայ թողուլ զարդիւնս «Ս. Մարկոս Աւետարանի» և «Նարեկի» ի նպաստ ծխական դպրոցի Խոշխաբար գեղջ։ Հ. 507.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց կարդել զՄամբրէ քահանայն Օշական գեղջ ի քննիչ վասն ի յայտ ածելոյ զզեղծմունս նախկին վանահօր ս. Գէորգայ վանուցն Մոզնոյ Խորէնայ վարդապետի և երկրորդ խնդրել ի Նորին Սրբութենէ արձակել ի պաշտամանց վանահայրութեան և փոխանորդութեան Տաթևու ղյիշեալ վարդապետն, որ չէ համապատասխան կոչմանն և գտանի զարդիս ընդ քննութեամբ։ Հ. 510.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց յանձն առնել երկրաչափ Վլադիմիրի Կամարովկու առնել հողաչափութիւն և հողաբաժանութիւն յԵղուարդ և ի Մաստարայ գիւղս ըստ մանրամասն ցուցմանց Սինոդիս։ Հ. 514.

Ի 8-ն յունիսի Սինոդն առեալ ի յարգանս զմիահամուռ խնդիր հասարակութեան Դսեղ գեղջ, դադարեցուցանել զքննութիւն զզեղծմանց Արիստակէս քահանայի Եգինեանց՝ զդուշացուցանելով զնա զի մի խոտորեսցի յայսմհետէ ի վայելուչ ընթացից իւրոց։ Հ. 524.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց թոյլ տալ Կոնսիստորիային Վրաստանի ընդունել զՀրաչեայ Աբուլեանց ի հոգևոր կոչումն ի ձեռնադրել զնա քահանայ Դերբ և Սաղոլաշէն գիւղից։ Հ. 526.

Ի 11-ն յունիսի ըստ մտաց մակագրական հրամանի Նորին Սրբութեան ի 1-ն ամսոյս, թ. 966, պատուիրել գանձապահին Սինոդիս տալ անդամոյ սորին Տ. Բաբգէն վարդ. ռուբլիս 300 ի նպաստ։ Թ. 527.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց խնդրել ի գիւանատանէ Տ. Փոխարբայի Կովկասու փութացուցանել զառաքումն դրամոց վանօրէից և եկեղեցեաց։ Հ. 528.

Ի 15-ն յունիսի Սինոդն հրամայեաց ընդունել զԴիոնեսիոս Մանուկեան ի հոգևոր կոչումն և պատուիրել Առաջնորդի թեմին՝ ձեռնադրել զնա ի քահանայ փոքր Պամաճ գեղջ։ Հ. 544.

Ի 20-ն յունիսի Սինոդն հրամայեաց զպահանջ հոգաբարձութեան դպրոցի Մեծ Ղարաքիլիսա գեղջ ի գումար 305 ր. 67 կ. հատուցանել յարդեանց ս. Խաչի վանուցն Արկեազու յաւուր տօնի վանուցն։ Հ. 554.

Ի նմին թուի Սինոդն ապացուցեալ համարելով զյանցանս Ներսիսի քահանայի Ղալաբեգեանց՝ հրամայէ արկանել զնա ընդ ապաշխարութեամբ ի խորանի եկեղեցւոյ զսաղմոսն ի ձեռին ժամանակաւ երկուց եօթնեկաց։ Հ. 557.

Ի 29-ն յունիսի Սինոդն հրամայեաց պատուիրել վանական կառավարութեան գնել ընդ տրամադրութեամբ Գաւառապետին վասն սրսկելոյ զփողոցն Վաղարշապատայ զմի երիվար և զմի տակառ ջրոյ, յայտնելով՝ զկնի անցանելոյ կարեացն յետս դարձուցանել զայնս։ Հ. 578.

Ի նմին թուի Սինոդն հաստատելով զեղբակացութիւն Կոնսիստորիային Վրաստանի փոխադրել զԱնդրէաս քահանայ Շահպազեան ի Ղուլալիս գեղջէ ի Մեծ-Խանչալի յօգնական քահանայի տեղւոյն՝ ստանալ նմա զմի երրորդ մասն յարդեանց գեղջն։ Հ. 579.

Ի 4-ն յուլիսի Սինոդն հրամայեաց հեռագրաւ յանուն Կոնսիստորիային Աստրախանի ծախել ի դրամագլխոց ս. Պօղոս Պետրոս եկեղեցւոյ տեղւոյն զ15,000 ռուբլիս յաւարտ շինութեան հոգևոր թեմ. դպրանոցին Աստրախանի։ Հ. 589.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց թոյլ տալ Կոնսիստորիային Երևանայ ծախսել ի նորոգութիւն շինութեան առաջնորդարանին և Կոնսիստորիայի 400 ռ. փոխարինաբար ի վիճակային արդեանց և ապա զյիշեալ գումարն դանձել յունևոր եկեղեցեաց։ Հ. 592.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց նախ՝ վաւերական համարել զարարեալ ի ձեռն Սահակ քահանայի Ափիեանց զ46 պսակս՝ կատարեալս առանց թոյլտուութեան, նաև զ12 պսակս կատարեալս ի 5-դ, ի 6-դ և յ7-դ աստիճանս ազգականութեան. երկրորդ՝ զպսակադիր Սահակ քահանայն վասն կատարելոյ զյիշատակեալ անթոյլատրելի պսակսն, նաև վասն ապօրինի կնապահութեան, դադարեցուցանել ի քահանայագործութենէ և առաքել զնա ի մին ի վանորէից թեմին, ըստ հայեցողութեան թեմական իշխանութեան, յապաշխարութիւն եռամեայ ժամանակաւ և երրորդ՝ վասն դաղելոյ զ340 ռուբլի 40 կոպէկ աթոռահասս և վասն ոչ մուծանելոյ զկատարեալ պսակսն յարձանագրական մատեան՝ տալ զՍահակ քահանայն ի դատ մարմնաւոր իշխանութեան ըստ 358 և 1442 յօդ. պատժ. օրինաց։ Վասն կատարման վճռոյս տալ հրաման Կոնսիստորիային Ղարաբաղի, դարձուցանելով զգործն։ Հ. 596։

Ի 11-ն յուլիսի Սինոդն հրամայեաց թոյլ տալ զննդադրաս այնոցիկ միաբանից, որք ի պատճառս հիւանդութեան հրամանաւ իշխանութեան գնան ի բժշկութիւն անձին. երկրորդ՝ որոց հրամայի գնալ յարձակուրդ վասն կազդուրման յերկուս ամիսս. երրորդ՝ ոչ տալ՝ որոց պաշտօնական գործով գնան ի տեղիս տեղիս և չորրորդ՝ որոց թողեալ զպաշտօնն ի թեմս մնան արտաքոյ վանուցս և տալ զռոճիկս և զննդադրաս միայն սկսեալ յօրէ բնակելոյ նոցա ի Մայր Աթոռի։ Հ. 608.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց տալ ծխական հոգաբարձութեան Աշտարակ գեղջ տեղի ի պէտս շինութեան ծխ. եկ. օր. դպրոցի Հայոց յայգուոջն Մ. Աթոռոյ, որ «Գալուստ եպիսկոպոսի» անուանի, ի շահեկանութիւն, մինչ անդ լինիցի դպրոցն և իրաւունք են բանալ զլուսամուտս յայգին. իսկ ի դադարել դպրոցին խափանեսցին լուսամուտքն և շինութիւնն անցանէ ի շահեկանութիւն ս. Ամենափրկիչ եկեղեցւոյ տեղւոյն։ Հ. 607.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց վաւերական համարել զծախս յարդեանց ուխտաւորեալոյն Փարպի գեղջ վասն 1903—1906 ամաց, երկրորդ՝ խստիւ պատուիրել հոգաբարձութեան եկեղեցւոյ Փարպի գեղջ անթերի մատուցանել յայսմ հետէ ի թեմական ատեանն, զարդիւնս ուխտաւորեալոյն ս. Գրիգորի, վասն յղելոյ ի Սինոդս ի պէտս հոգևոր ճեմարանի։ Հ. 606.

Ամուսնալուծութիւնք

Ի 1-ն յունիսի ըստ հրամանի Սինոդիս լուծեալ համարել զպսակ Սարգսի Տիրացուեան ընդ կնոջն Սրբուհւոյ, թոյլ տալ կնոջն միայն մտանել ի նոր ամուսնութիւն։ Հ. 492.

Ի 4-ն յունիսի Սինոդն հրամայեաց անվաւեր համարել զպսակ Զարդարայ Մելիք-Մկրտչեանց ընդ Զոհրաբայ Յովհաննիսեանց, թոյլ տալ Զարդարայ մտանել ի նոր ամուսնութիւն իսկ զԽաչատուր քահանայն Դիմաշէն գեղջ առաքել ի վանս Սևանայ յապաշխարութիւն երկամսեայ ժամանակաւ։ Հ. 513.

Ի 8-ն յունիսի Սինոդն հրամայեաց լուծանել զպսակ Սարգսի Հեջուբեանց ընդ կնոջն Եուշանկան, կնոջն և եթ թոյլ ալով մտանել ի նոր ամուսնութիւն։ Հ. 523.

Ի 20-ն յունիսի ըստ հրամանի Սինոդի լուծանել զպսակ Սարգսի Սահակեանց ընդ Եղիսաբեթի Գրիգորեան, առնն և եթ տալով իրաւունս նորոյ ամուսնութեան։ Հ. 556.

Ի նմին թուի Սինոդն հաստատելով զեղրակացութիւն Կոնսիստորիային Վրաստանի՝ լուծեալ համարի զպսակ Սարգսի Սահակեանց ընդ Եղիսաբեթի Գրիգորեան, կնոջն և եթ տալով իրաւունս մտանել ի նոր ամուսնութիւն։ Հ. 556.

Ի նմին թուի Սինոդն հաստատելով զեղրակացութիւն

Կոնսիստորիային Վրաստանի՝ լուծանել զպսակ Յովհաննու Դանիէլեան ընդ Կատարինէի Մկրտչեան, առն և եթ իրաւունք են մտանել ի նոր ամուսնութիւն։ Հ. 571.

Ի նմին թուի Սինոդն հաստատելով զեզրակացութիւն Կոնսիստորիային Վրաստանի՝ լուծեալ համարի զպսակ Աղեքսանդրի Յակոբեանց ընդ կնոջն Եղիսաբեթի Դարչոյեան, առն և եթ տալ իրաւունս մտանել յամուսնութիւն ի նոր։ Հ. 572.

Ի նմին թուի Սինոդն, ըստ եզրակացութեան Կոնսիստորիային Ղարաբաղու՝ լուծեալ համարի զպսակ Համբարձումայ Գիւզալեանց ընդ կնոջն Սալաթի Երեմեան, միայն առնն տալով իրաւունս մտանելոյ ի նոր ամուսնութիւն։ Հ. 609.

Յ 2-ն յուլիսի Սինոդն հաստատելով զեզրակացութիւն Կոնսիստորիային Ղարաբաղի, լուծեալ համարի զպսակ Դաւթի Ռոստոմեան ընդ կնոջն Աննայի Ռոստոմեան, կնոջն և եթ տալով իրաւունս մտանել ի նոր ամուսնութիւն։ Հ. 586.